

վորդապետին նշխարքը եւ յանձնեց յաւիտե-
նականութեան ծոցը:

Խաղաղութիւն իր ոսկրներուն:

Կոլոտի շիրիմը շինուեցաւ ճերմակ մարմարէ .
անպաճոյճ, վայելուչ շիրիմ մը, այնչափ պարզ որ
նոյն իսկ իմաստալից տապանագիրը¹ սպիտակ մար-
մարէ տախտակով մը, առանձինն զետեղուած է
պատին վրայ:

Կոլոտին շիրիմը անշարժ ու անխախտ մնացած
է Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյն կրած այնքան փոխու-
թութիւններուն մէջ: Միայն ամէնէն վերջին
նորոգութիւններուն ու փոփոխութիւններուն
առթիւ՝ երբ երբ եկեղեցիներուն ալ ճակատը
միանգամայն ներս քաշուեցաւ, Եկեղեցւոյ արեւ-
մտեան կողմը շինուելիք շէնքերուն տեղ բանալու
համար, Կոլոտին շիրիմը Եկեղեցիէն դուրս մնաց
ճիշդ պատին կից՝ «ի հարաւոյ կողմանէ աւագ
դրանն» եւ տապանագիրն ալ ոսկեգօծուելով
զետեղուեցաւ պատին դուրսի կողմը, շիրմին վերեւ,
այնպէս որ երբ դուրսի արեւմտեան դռնէն Լու-
սաւորչի բակը մտնես եւ ուղղակի յառաջանաս Եկե-
ղեցւոյ Աւագ դուռը, աչքէդ չի վրիպիր սպիտակ
մարմարէ ցածկեկ շիրիմ մը եւ տապանագիրը
դիմացդ²: — Յովհաննէս Կոլոտ պատրիարքի
շիրիմն է այն:

Անցորդ, անկից յարգանքով անցիր:

1 Իմաստալից տապանագիր մ'է այն, որուն պատ-
ճէնը, իբր մոտտեօիլ կենդանագիր զետեղեցի դործիս
սկիզբը: Նալեանի գրէն ելած է, հաւանաբար, այն տապա-
նագիրը, որ կը ցոլացընէ Կոլոտի արտաքին եւ ներքին բոլոր
կեանքը:

2 Կոլոտին շիրիմը, ինչպէս կը վկայեն գիտցողները,
Եկեղեցւոյ ներսը եղած ատեն աւելի փառաւոր է եղեր,
բարձր տապանաքարով: Եւ տապանաքարին մարմարը, որ
պատին վրայ հաստատուելու համար շինուած է,